Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 845 - Ա
որոշման

«ՕՐՐԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՕՐՐԱՆ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակները	Օգնել ֆինանսական դժվար կացության մեջ հայտնված ընտանիքների երեխաներին և ծերերին, նրանց շրջանում վերացնել մուրացկանությունը, աջակցել աղքատության մեջ գտնվող ընտանիքներին:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում նախատեսվում է օգտվել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը (բարեգործները)	ԱՄՆ-ում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն, «Գրիգորյան» բարեգործական հիմնադրամ (Մեծ Բրիտանիա), անհատ բարերարներ՝ Հովհաննիսյան ընտանիք (Հայաստանի Հանրապետություն), Հակոբ Բարսեղյան (ԱՄՆ), Գարո Մարտիրոսյան (ԱՄՆ), Սայաթ Օրունչակչիել (ԱՄՆ), Ակյան ընտանիք (ԱՄՆ)
4.	Ծրագրի կատարողը	«Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն (ՀՎՀՀ՝ 02552842, հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Առաջին Եկմալյան 6, հեռախոս՝ 010 53-51-67)
5.	Ծրագրի իրականացման վայրը (վայրերը), բնագավառը	Հայաստանի Հանրապետություն՝ քաղաք Երևան, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	148,418,463 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	1) 6-16 տարեկան 120 երեխա (երեխաների մեծ մասը երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ են, ամուսնալուծված, հաշմանդամություն ունեցող կամ ազատազրկման դատապարտված ծնողներ ունեն), որոնք ապրում են սոցիալական ծայրահեղ դժվարություններ ունեցող, մուրացկանության շեմին գտնվող ընտանիքներում. 2) 50 կենսաթոշակառուներ, որոնց մեջ մտնում են նաև 60 և ավելի բարձր տարիքի սոցիալապես անապահով կանայք ու տղամարդիկ, որոնք անտուն են, կամ մուրում են փողոցում, կամ միայնակ են, կամ ամուսնացած են և անժառանգ, կամ ֆունկցիոնալության թեթև, միջին, ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք են, կամ ունեն ժառանգներ, սակայն լրացուցիչ աջակցության խիստ կարիք ունեն. 3) Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների երեխաներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է, առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Քաղաք Երևանի Առաջին Եկմալյան 6 հասցեում գտնվող կենտրոնում շահառուներին սննդով ապահովում – 65,682,463 դրամ՝ ա. երեխաներին շաբաթական 5 օր տաք ճաշով ապահովում և կարիքավոր ծերերին շաբաթվա սննդամթերքով փաթեթների տրամադրում – 53,200,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, բ. շահառուներին սննդով ապահովելու նպատակով՝ խոհանոցային սարքավորումների և պարագաների ձեռքբերում ու խոհանոցային աշխատողների վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի) – 8,482,463 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, գ. Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքների երեխաներին սննդամթերքով փաթեթների պարբերաբար տրամադրում – 4,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 2) Շահառուներին առաջնային բժշկական և հոգեբանական աջակցություն տրամադրելու նպատակով՝ բժշկասանիտարական առաջին անհրաժեշտության պարագաների ձեռքբերում և բուժքրոջ ու հոգեբանի վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի) – 1,800,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակա-հատվածում. 3) Շահառուներին սոցիալական աջակցության տրամադրում – 48,076,000 դրամ՝ ա. շահառուների համար հագուստի և կոշիկի ձեռքբերում ու սոցիալական աշխատողի վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի) – 6,800,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, բ. օտարերկրյա պետություններից բեռների (բարերարների ցանկությամբ ուղարկվող նվերներ, հագուստ, գրենական պիտույքներ, խաղալիքներ, սպորտային պարագաներ) – 28,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, գ. ծայրահեղ կարիքավոր 60 ընտանիքների էլեկտրաէներգիայի և 3 ընտանիքների բնակարանի վարձի վճարում – 5,500,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, դ. 90 երեխայի տրանսպորտով ամենօրյա երթևեկության ապահովում – 7,776,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակա-հատվածում. 4) Շահառուների հանգիստը և ժամանցը կազմակերպելու նպատակով՝ թատրոնի, կինոթատրոնի, պատկերասրահների տոմսերի ձեռքբերում, ամառային ճամբարում հանգստի և ջրաշխարհի այցելությունների կազմակերպում ու մշակութային աշխատողների վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական

		պայմանագրի) – 9,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 5) Դպրոցահասակ երեխաների համար կրթական աջակցության ապահովում – 13,060,000 դրամ՝ ա. դասապատրաստման և ձեռարվեստի խմբակների (փայտամշակում, կար ու ձև, կավագործություն, նկարչություն, բացիկների պատրաստում) կազմակերպումը ապահովելու նպատակով՝ համակարգիչների, գրենական պիտույքների, ուսումնական և ձեռարվեստի նյութերի, պայուսակների ձեռքբերում ու ուսուցիչների վարձատրություն (համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրի) – 11,800,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակա-հատվածում, բ. 8 սաների՝ ըստ նախասիրության (երաժշտություն, արհեստներ, շախմատ և այլն) ուսման վարձերի վճարում – 1,260,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 6) Դրամական միջոցների հայթայթման նպատակով՝ «Արմենիա» հյուրանոցային համալիրում միջոցառման կազմակերպում և բուկլետների ու թերթերի տպագրություն (ամենամյա բարեգործական ընթրիք, որտեղ տեղի է ունենում հանդիպում կազմակերպության բարերարների հետ և կազմակերպվում է դրամահավաք, որը ծախսվում է կազմակերպության անմիջական ծրագրային գործունեության համար) ու «Օրրան» բարեգոր-ծական հասարակական կազմակերպության 26-ամյակին նվիրված միջոցառման անցկացում – 8,800,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում. 7) Քաղաք Երևանի Առաջին Եկմալյան 6 հասցեում գտնվող «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կենտրոնի ընթացիկ վերանորոգում - 2,000,000 դրամ: Նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	1) Էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերում - 1,800,000 դրամ. 2) Գազի մատակարարման ծառայությունների ձեռքբերում - 3,800,000 դրամ. 3) Խմելու ջրի մատակարարման ծառայությունների ձեռքբերում - 360,000 դրամ. 4) Հեռախոսակապի և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ձեռքբերում -2,800,000 դրամ. 6) Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում - 1,500,000 դրամ. 7) Սննդամթերքի ձեռքբերում - 43,800,000 դրամ. 8) Կոշիկի, հագուստի ձեռքբերում - 5,500,000 դրամ. 9) Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում - 47,283 դրամ. 10) Գազի կաթսայի տեխնիկական զննման անցկացման ծառայությունների ձեռքբերում - 68,180 դրամ. 11) Գրասենյակային ապրանքների ձեռքբերում - 1,800,000 դրամ. 12) Փոստային ծառայությունների ձեռքբերում - 800,000 դրամ. 13) Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում - 1,500,000 դրամ.

		14) Երեխաների հանգստի և ժամանցի միջոցառումների հետ կապված ծառայությունների և ապրանքների ձեռքբերում - 4,000,000 դրամ. 15) Բժշկական-սանիտարական առաջին անհրաժեշտության պարագաների ձեռքբերում - 300,000 դրամ. 16) Ձեռարվեստի խմբակների համար նյութերի ձեռքբերում - 1,000,000 դրամ. 17) Տպագրական ծառայությունների ձեռքբերում –1,500,000 դրամ. 18) Խոհանոցային սարքավորումների, պարագաների և նյութերի ձեռքբերում - 1,800,000 դրամ. 19) Բենզինի ձեռքբերում - 3,500,000 դրամ. 20) Դպրոցական պայուսակների և գրենական պիտույքների ձեռքբերում - 1,500,000 դրամ. 21) Հյուրանոցային ծառայությունների ձեռքբերում - 4,500,000 դրամ. 22) Օտարերկրյա պետություններից բեռների ներմուծում (բարերարների ցանկությամբ ուղարկվող նվերներ, հագուստ, գրենական պիտույքներ, խաղալիքներ, սպորտային պարագաներ) - 28,000,000 դրամ. 23) Ընթացիկ վերանորոգման հետ կապված ծառայությունների ձեռքբերում - 2,000,000 դրամ. 24) Դահլիճի վարձակալություն - 2,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր	1) Գազի մատակարարման ծառայությունների ձեռքբերում - 3,800,000 դրամ. 2) Գազի սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների ձեռքբերում - 47,283 դրամ. 3) Խմելու ջրի մատակարարման ծառայությունների ձեռքբերում - 360,000 դրամ. 4) Էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների ձեռքբերում - 1,800,000 դրամ. 5) Հեռախոսակապի և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների ձեռքբերում - 2,800,000 դրամ. 6) Գրասենյակային ապրանքների ձեռքբերում - 1,800,000 դրամ. 7) Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում՝ 1,500,000 դրամ. 8) Փոստային ծառայությունների ձեռքբերում - 800,000 դրամ. 9) Բենզինի ձեռքբերում - 3,500,000 դրամ. 10) Գազի կաթսայի տեխնիկական զննման անցկացման ծառայությունների ձեռքբերում - 68,180 դրամ. 11) Աշխատավարձ վարչական աշխատողներին (ադմինիստրատոր, հաշվապահ, վարորդ) - 7,832,000 դրամ. 12) Դահլիճի վարձակալություն - 2,000,000 դրամ:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Առողջապահության նախարարություն, Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչություն, Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի և Երևանի վարչական շրջանների սոցիալական վարչություններ, տեղական ու միջազգային հասարակական կազմակերպություններ, որոնք աշխատում են ռիսկի խմբի երեխաների հետ, Սոցիալական ոլորտում գործող հասարակական կազմակերպություններ, ՋԼՄ-ներ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1) Հայաստանի Հանրապետության կառավարություն 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին. 2) Ամսական և եռամսյակային աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրենների խորհրդին. 3) «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության գործադիր տնօրենի, հաշվապահի և սոցիալական աշխատողի, ինչպես նաև շահառուների ստորագրություններով ու անձնագրային տվյալներով, գույքագրման և բաշխման իրականացում. 4) Պետական եկամուտների կոմիտե ամսական հաշվետվությունների հանձնում. 5) «Գրանթ Թորնթոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից ֆինանսական աուդիտի իրականացում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

29.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ